«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«30» սեպտեմբերի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ՍՑ-ԳԲԽ-06/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2014թ. N 73-1/729355-14 գրությամբ ներկայացված «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02628579) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.12.2014թ. N 73-1/729355-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության

դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 27.12.2014թ. N 09/032-2159 գրությամբ դիմել է «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ին, սակայն Ընկերությունից պատասխան չի ստացվել:

Ընկերության տնօրենը, մասնակցելով Կենտրոնում 19.02.2015թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկմանը, հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչության կողմից 24.11.2014թ. կայացվել է որոշում՝ «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ի գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին, ինչի արդյունքում այլևս հնարավոր չի եղել Պայմանագրով նախատեսված սննդամթերքը մատակարարել:

Ընկերության տնօրենը նշել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.11.2014թ. Ս-4/21557-14 գրությամբ Ընկերությանը տեղեկացրել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածով նախատեսված արգելադրման դեպքում առկա հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության ոչ պակաս, քան քսան տոկոսը մարելուց հետո հարկային մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն իրավունք ունի մնացած պարտավորությունը մարելու վերաբերյալ հարկ վճարողի հետ կնքելու պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց, սակայն տվյալ դեպքում «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ի հետ ժամանակացույց կնքելու իրավական հիմքեր չկան:

Կենտրոնի այն հարցին, թե Ընկերությունը ստացել է Պայմանագիրը լուծելու վերաբերյալ Պատվիրատուի 10.12.2014թ. N 14 գրությունը, Ընկերության տնօրենը պատասխանել է, որ ստացել է, սակայն որևէ բան դրա հետ կապված չի նախաձեռնել:

3. ՀՀ «Նոր Գեղի Մ/Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկ-ները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 27.12.2014թ. N 06/032-2160 գրությամբ դիմել է ՀՀ «Նոր Գեղի Մ/Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ և Կենտրոնին տրամադրել «ՆԳՄ/Մ-ՇՀԱՊՁԲ-14/2-2» ծածկագրով պայմանագրին (այսուհետ նաև՝ Պայմանագիր) վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն 29.01.2015թ. N 1 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ «Նոր Գեղի Մ/Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ի հետ 2014թ. սեպտեմբերի 1-ին կնքվել է «ՆԳՄ/Մ-ՇՀԱՊՁԲ-14/2-2» ծածկագրով պայմանագիր, համաձայն որի Ընկերությունը իրականացրել է սննդի մատակարարում: Սակայն, Ընկերությունն առանց որևէ պատճառաբանության, սկսած 24.11.2014թ. նախատեսված ապրանքը չի մատակարարել, ինչի վերաբերյալ վերջինս 28.11.2014թ. էլեկտրոնային կարգով Պատվիրատուի կողմից նախազգուշացվել է, բայց որևէ կերպ չի արձագանքել:

Վերոգրյալով պայմանավորված՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4.1 կետի «բ» ենթակետը, 10.12.2014թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Պատվիրատուն նույն գրությամբ նշել է նաև, որ Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 1046040 ՀՀ դրամ, բայց փաստացի մատակարարվել է 608299 ՀՀ դրամի ապրանք:

Պատվիրատուի ներկայացուցիչը, մասնակցելով Կենտրոնում 19.02.2015թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկմանը, հայտնել է, որ պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքն Ընկերության կողմից չեն վերականգնվել:

ՀՀ «Նոր Գեղի Մ/Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 02.03.2015թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով Ընկերության նկատմամբ հաշվարկված 8973 ՀՀ դրամ տույժի

(չմատակարարված ապրանքի արժեքը կազմում է 437742 ՀՀ դրամ, չմատակարարված օրերի քանակը կազմում է 41 օր), 5230 ՀՀ դրամ տուգանքի (Պայմանագրի ընդհանուր գնի՝ 1046040 ՀՀ դրամի 0,5%) և 104604 ՀՀ դրամ տուժանքի վերաբերյալ հաշվարկը:

4. ՍՑ-ԳԲԽ-06/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2014թ. N 73-1/729355-14 գրությամբ «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ «Նոր Գեղի Մ/Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ի միջև 01.09.2014թ. կնքվել է «ՆԳՄ/Մ-ՇՀԱՊՁԲ-14/2-2» ծածկագրով սննդամթերքի թվով 30 չափաբաժինների մասով գնման ենթակա ապրանքի (այսուհետ՝ Ապրանք) ձեռքբերման պայմանագիր:

2. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, Ապրանքը նախատեսվել է գնել 2014թ. ընթացքում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, ընդ որում՝ 3-րդ և 4-րդ եռամսյակներում:

3. Պայմանագրով սահմանվել է, որ Ընկերության կողմից 1-30-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքը պետք է մատակարարվի 7 օրացուցային օրը մեկ անգամ:

4. Ըստ Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքների և մինչև պայմանագրի լուծումը ստացված ապրանքների քանակի և արժեքի վերաբերյալ կազմված աղյուսակ 1-ի ու ՀՀ «Նոր Գեղի Մ/Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ի միջև փոխադարձ համաձայնությամբ երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունների՝ Ընկերության կողմից 3-րդ և 4-րդ եռամսյակներում՝ մինչև 24.11.2014թ., ***30*** չափաբաժիններից ***26*** չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակ թերի է մատակարարվել (այլուր, կաթ,

թթվասեր, կաթնաշոռ, պանիր, ձեթ, միս հավի, նրբերշիկ, ջեմ, լոբի հատիկավոր, ոլոռ, ոսպ, բրինձ 1, գրեչկա, հաճար, աղ կիտրոնի, խմորիչ, սոխ, կաղամբ, դդմիկ, նարինջ, բանան, վաֆլի, մարմելադ, կակաո, դոնդողակ), իսկ 2 չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակ ընդհանրապես չի մատակարարվել (դափնետերև, կանաչի):

5. 24.11.2014թ.-ից մինչև Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծումն Ընկերության կողմից չի մատակարարվել Պայմանագրով նախատեսված թվով 28 ապրանքատեսակներից ոչ մեկը:

6. Պատվիրատուն 28.11.2014թ. N 13 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ վերջինս չմատակարարելով Ապրանքը՝ խախտել է Պայմանագրի 2.2 կետը և նախազգուշացրել է, որ կրկնվելու դեպքում Պայմանագիրը կարող է դադարեցվել:

7. Պատվիրատուն 10.12.2014թ. N 14 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ համաձայն Պայմանագրի 3.1.4.1 կետի «բ» ենթակետի՝ միակողմանի լուծում է ՀՀ «Նոր Գեղի Մ/Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ի միջև 01.09.2014թ. կնքված «ՆԳՄ/Մ-ՇՀԱՊՁԲ-14/2-2» ծածկագրով պայմանագիրը:

8. ՀՀ «Նոր Գեղի Մ/Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 02.03.2015թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով Ընկերության նկատմամբ հաշվարկված 8973 ՀՀ դրամ տույժի (չմատակարարված ապրանքի արժեքը կազմում է 437742 ՀՀ դրամ, չմատակարարված օրերի քանակը կազմում է 41 օր), 5230 ՀՀ դրամ տուգանքի (Պայմանագրի ընդհանուր գնի՝ 1046040 ՀՀ դրամի 0,5%) և 104604 ՀՀ դրամ տուժանքի վերաբերյալ հաշվարկը:

9. Պատվիրատուն 31.03.2015թ. N 6 գրությամբ հայտնել է, որ Պայմանագրի լուծման հետևանքով 02.03.2015թ. գրությամբ Կենտրոնին ներկայացրած տույժի, տուգանքի և տուժանքի հաշվարկի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ընկերությանը, սակայն հաշվարկված տույժը, տուգանքը և տուժանքը վերջինիս կողմից մինչ օրս չի վերականգնվել:

5. ՍՅ-ԳԲԽ-06/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2014թ. N 73-1/729355-14 գրությունը, ՀՀ «Նոր Գեղի Մ/Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 29.01.2015թ. N 1 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, 02.03.2015թ. և 31.03.2015թ. գրությունները, լսելով Կենտրոնում 19.02.2015թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցչի և Ընկերության տնօրենի կարծիքները, ինչպես նաև ուսումնասիրելով քննարկման ժամանակ վերջիններիս կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ)

149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում ՀՀ «Նոր Գեղի Մ/Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին կամ նրա կողմից որոշված ստացողին հանձնել նույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերք (այսուհետ՝ Ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Ընկերությունն Ապրանքը մատակարարում է հետևյալ պայմաններով՝ 1-30-րդ չափաբաժինների համար 7 օրացուցային օրը մեկ:

Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ Ապրանքը մատակարարվում է նույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Ընկերությունն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.4.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Այսպիսով, «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ն «ՆԳՄ/Մ-ՇՀԱՊՁԲ-14/2-2» ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված թվով 30 չափաբաժիններով նախատեսված գնման ենթակա ապրանքներից ***26*** չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակ թերի է մատակարարվել (ալյուր, կաթ, թթվասեր, կաթնաշոռ, պանիր, ձեթ, միս հավի, նրբերշիկ, ջեմ, լոբի հատիկավոր, ոլոռ, ոսպ, բրինձ 1, գրեչկա, հաճար, աղ կիտրոնի, խմորիչ, սոխ, կաղամբ, դդմիկ, նարինջ, բանան, վաֆլի, մարմելադ, կակաո, դոնդողակ), **2** չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակ ընդհանրապես չի մատակարարվել (դափնետերև, կանաչի), իսկ 24.11.2014թ.-ից սկսած չի մատակարարվել Պայմանագրով նախատեսված թվով 28 ապրանքատեսակներից ոչ մեկը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից ավելի քան մեկ անգամ խախտվել են Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, և դրա հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդին սույն եզրակացության տրամադրումն Ընկերության կողմից չեն վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2014թ. N 73-1/729355-14 գրությամբ «Ռուբիկոն Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից

գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-06/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան